— Խնդրեմ, իշխան, ինչպէ՞ս:

— Այս նաւակներէն մէկը կը կանչես՝ կը մտնես եւ կ'երթաս սա դիմացի ծովեզրը փոքրիկ եկեղեցուոյն քովի պալատը, կ'ըսես, որ Թէոդորոս Ռշտունուոյն կողմեն կ'ուգամ՝ Ստրատելատին հետ պէտք է տեսնվիմ, վայրկենին քեզ իրեն առաջը կը տանին, կը ցցնես այս նաւը, կ'ըսես թէ Ռշտունին հոն է շղթայակապ եւ կը խնդրէ, որ ինձ հարիւր ոսկի տաս:

— Եւ այդպէս հարիւր ոսկին ինձ կուտածն,— հարցուց երիտասարդը աչքերը մեծ-մեծ բանալով:

— Եթէ դեռ ուշանաս՝ Ստրատելատ կելնէ կ'երթայ, եւ ետքը իմ գալս երբ ուրիշեն իմանայ դու հարիւր ոսկին կը կորցնես: Իսկ եթէ հիմա երթաս, հարիւր ոսկին եթէ ինք չի տայ՝ ես քեզ երկու հարիւր ոսկի կ'ուտամ:

Վայրկեան մը մտածեց տղան, բայց շատ չուշացաւ՝ ցատկեց նաւակ մը, եւ երբ ելաւ ծովեզրեայ պալատը, իրօք Ռշտունուոյն անունը տալուն շատ չանցաւ՝ հանեցին զինք ծեր զօրավարին առջեւ, որ նոյն ինք Թէոդորոս Երիզացին էր: Կը պատրաստուէր նոյն վայրկենին արքունիք երթալու, երբ «Շղթայակապ այդ նաւուն մէջն է» ըսաւ տղան, ծեր Ստրատելատը ցատկեց տեղեն՝ եկաւ պատուհանին քով եւ չկարենալով հաւտալ, դարձեալ կը հարցնէր թէ իրօք այդ նաւուն մէ՞ջն է շղթայակապ: Իսկ երբ երիտասարդ զինուորը կրկնեց նոյն պատասխանը, ձայն տուաւ ծառաներուն եւ հրամայեց շուտով իւր նաւակը պատրաստել ու ինք սկսաւ իջնել սանդուխներէն:

— Բայց զքեզ չուզեց այդ հայ իշխանը, Ստրատելատ,— ըսաւ տղան,— այլ միայն ինձ հարիւր ոսկի տալ խնդրեց:

— Դու այստեղ նստէ, ետքը կառնուս քու ոսկիներդ,— դու ուստի՞ց ընկերացար Թէոդորոսի:

— Ես Երիզայ բանակին մէջն էի, երբ Թումայ զօրավարը հայը կապեւ տուաւ, եւ մեր գունդին հրամայեց, որ մինչեւ հոս բերենք զինքը եւ յանձնենք Վաղենտինոսի:

— Այ՛ս կերպով կ'իմանայ Թումայ իր պաշտօնը. անմի՛տ…

— Իսկ հայը ինձ ըսաւ, թէ գնա հարիւր ոսկի ուզէ իմ անունովս: